Պարենաւորման հողի վրա, փետրուար և մարտ ամիսներին, նոյնիսկ մի քանի ցոյցեր էին տեղի ունեցել քաղաքային ինքնավարութիւնների և պարենաւորման նախարարութեան դէմ: Բոլշևիկները գրդռում էին ամբոխի մութ ընազդները. խօսում էին այն անսպառ հացի, շաքարի, հագուստեղէնի ու նաւթի մասին, որ պիտի լեցւի Հայաստան հէ՛նց որ հաստատուի խորհրդային իշխանութիւն, և հրաւիրում էին տապալելու «դաշնակների բռնապետութիւնը»: Սոված ու տկլոր մարդիկ, ի հարկէ, հեշտութեամբ ենթարկւում էին այսպիսի քարոզչութեան և կոյր գործիք էին դառնում բոլշևիկների ձեռքին: Պէտք է արձանագրել և այն իրողութիւնը, որ տնտեսական տագնապն ու սովը իբրև քաղաքական պայքարի զէնք դործ էին ածում ո՛չ միայն միջոցների մէջ խորութիւն չդնող բոլշևիկները, այլ և ուրիշ՝ աւելի չափաւոր տարրերը, ինչպէս, օրինակ, ժողովրդական կուսակցութիւնը:

Մինչև վերջերս հայ բոլշևիկները ժխտում էին այն մեղադրանքը, թէ իրենք Հանրապետութեան օրով աշխատել են պետական յեղաշրջում առաջ բերել, թէ մայիսեան օրերին որոշել են ընդհանուր ապստամբութիւն անել: Այժմ արդէն, հէնց իրենց կողմից հրատարակւած բազմաթիւ փաստերով ու վաւերագրերով, հաստատւում է, որ 1919 և 1920 թւականների ընթացքում հայ կոմունիստները Հայաստանում պատրաստւելիս են եղել, ապստամբութեան միջոցով, խորտակելու Հայաստանի անկախութիւնը*):

Այս տեսակէտից հետաքրքրական են հայ բոլշևիկ պարագլուխների վկայութիւնները.

«Բոլշևիկեան ակտիւ և խտացած գործունէութիւնը Հայաստանի տերիտորիայում, գրում է Ս. Կասեանը,**) իրապէս սկսւել է 1919 թւի ամառւանից: Ճիշտ է, առաջ էլ եղել են այդտեղ դրուպաներ, բայց որովհետև մեր կուսակցութեան Երկրային Կոմիտէն կտրւած է եղել Հայաստանից, նա չի կարողացել ոչ կազմակերպչական գործ կատարել այդ դրուպաների միջոցով, ո՛չ էլ ուղղութիւն տալ նրանց գործունէութեանը: Անգլիացիների դալուց յետոյ, երբ դաշնակներն աւելի էին երես առել և իշխանութիւնն ամբողջապէս կենտրոնացրել իրենց ձեռքը, այդ դրուպաների գործունէութիւնը լիկւիդացիայի է ենթարկւում համարեա ամբողջապէս: Նոյն տարւայ սեպտեմբերին, նախապատրաստական աշխատանքներից յետոյ, Երկրային Կոմիտէի ներկայացուցիչները կազմակերպում են Երևանում՝ գաւառներից հրաւիրւած պատասխանատու ընկերների գաղտնի խորհրդակցութիւն, ուր մշակւում է այդ երկրում մեր գործունէութեան հիմնական տակտիկան և ստեղծւում կենտրոնական մարմին՝ «Հայաստանի Կոմիտէ»:

Այս խորհրդակցութիւնը, ըստ Կասեանի, մեկնում է այն փաստից, որ Հայաստանում «արդիւնաբերական կապիտալիզմի նշոյլն անգամ գոյութիւն չունի», «առևտրական կապիտալիզմի դէմքն էլ վաղուց մոռացել է», «գիւղացիութեան խոշորագոյն մասը անծանօթ է լատիֆունդիական, նոյնիսկ կալածատիրական յարաբերութիւններին, ուր ազգաբնակութեան 90% աղքատութեան և զրկանքի մէջ է քարշ տալիս իր խղճուկ գոյութիւնը», և

*) Տես, ի միջի այլոց, Շ. Ամիրխանեանի «Մայիսեան Ապստամբութիւնը Հայաստանում», 1926. Մոսկւա և Ա. Յովհաննիսեանի «Հայաստանի Յեղափոխութեան Յուլիսն ու Հոկտեմբերը», Երևան, 1925թ.

**) «Նոր Աշխարհ», ամսագիր, սեպտեմբեր, 1922թ. № 2: